# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՁ Մանվել Մաթևոսյան Վահանի-ն ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 11 | Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված կլինի լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից, արտաքին չափսերը՝ 800x 400 x 1800 մմ ( L x Խ x Բ): Գրապահարանը պատրաստված կլինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, կլինի ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները կլինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Կլինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվում է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Գրապահարանը կունենա 300 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 2-ը փակվում են, եզրերը մշակված, թրծված թափանցիկ երկփեղկ ապակյա դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով, իսկ ներքևի 3-ը՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները կունենան մետաղական օվալաձև բռնակներ: Դարակները պատրաստված կլինեն լամինացված 18 մմ հաստության E0դասի ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): |

| | | |
|---|---|---|
| | | Աշխատանքային հարթությունը կլինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի)։ Բոլոր միացումներն կիրականացվեն թաքնված ամրակցումներով։ Գրապահարանի հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն E0դասի ՓՏՍ գույնի: Պահարանը ամբողջ պարագծով կունենա շրջանակաձև ոտքեր։ Ոտքերը կլինեն կարգավորվող։ Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 700 x 300 x 100 մմ (Lx Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվի պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի հայերեն ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՁ Մանվել Մաթևոսյան Վահանի в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 11 | |